Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայությունների դրամաշնորհի պայմանագիր N ՊԳԳԳ-01-2019

ք. Երևան 24 հունվարի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող՝ աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա. Օբոսյանի, մի կողմից և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս Նվիրառուի կանոնադրության հիման վրա գործող՝ գլխավոր տնօրենի պարտականությունները ժամանակավորապես կատարող՝ Է. Օհանյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Ի կատարումն «2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների և ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 01 բաժնի 06 խմբի 01 դասի 1079 Ծրագրի «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայություններ» թիվ 11003 դասիչով միջոցառման (այսուհետ՝ «Միջոցառում») իրականացման նպատակով Նվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված համամասնություններով, սեփականության իրավունքով, Նվիրառուին անհատույց հատկացնել 313.731.600 (երեք հարյուր տասներեք միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ Նվիրառուն պարտավորվում է Միջոցառումն իրականացնել սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված աշխատանքների (այսուհետ՝ «Աշխատանքներ») ձևով՝ Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից Աշխատանքների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը:

2.1.2 Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը՝ սեփական հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Նվիրառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5-րդ բաժնում նախատեսված տուգանքը.

2.1.3 Առանց կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել Նվիրատուին պատճառված վնասները, եթե՝

ա. Նվիրառուն ժամանակին չի սկսում Միջոցառման իրականացումը, կամ Միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն չի կարող պատշաճ իրականացվել,

բ. Նվիրառուն երկու և ավելի անգամ խախտել է Միջոցառումով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետները (դրանք նախատեսված լինելու դեպքում),

գ. Կատարված Աշխատանքների արդյունքները չեն համապատասխանում Միջոցառմամբ սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջել իրեն հանձնել անավարտ Աշխատանքների արդյունքները:

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Կատարել Միջոցառման (դրա որևէ մասի) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.2.2. իրականացնել Միջոցառումով նախատեսված այլ աշխատանքներ.

2.2.3. Կատարված Աշխատանքների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն կատարված Աշխատանքները (կամ դրանց որևէ մասը) համապատասխանում են Միջոցառման և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Նվիրատուն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր ծանուցում է Նվիրառուին:

2.3 Նվիրառուն իրավունք ունի՝

2.3.1 Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքը Նվիրատուի կողմից ընդունվելու դեպքում՝ նրանից պահանջելու վճարել Նվիրառուին հասանելիք գումարները.

2.3.2 Նվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել Նվիրառուին պատճառված վնասները:

2.4 Նվիրառուն պարտավոր է՝

2.4.1 Իրականացնելով Նվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ Հա-

ների համար սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան.

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Միջոցառմամբ և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով, իսկ հաշվետու տարվա արդյունքներով՝ սույն պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով չօգտագործված միջոցները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը, ընդ որում դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և նշված հարկի վճարումների համար հատկացումների գծով չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում նույնպես ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

2.4.3 Կատարել Աշխատանքների կատարման բացահայտված թերությունների վերացման նպատակով Նվիրատուի կողմից տրված ցուցումները.

2.4.4 Սույն պայմանագրով սահմանված կարգով Նվիրատուին ներկայացնել Աշխատանքների կատարման մասին հաշվետվություններ, իսկ Միջոցառման ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5 Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 Աշխատանքների որևէ մասի կատարման մասին հաշվետվությունները Նվիրատուի կողմից հիմնավոր պատճառներով չընդունվելու դեպքում Նվիրառուն պարտավորվում է անվճար՝ Նվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՈՐԵՎԷ ՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՈՒԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Աշխատանքները կամ դրանց որևէ մասը Նվիրատուի կողմից ընդունվում են դրա մասին սույն պայմանագրի N 3 հավելվածում բերված ձևի՝ հանձնման-ընդունման արձանագրություն, Կողմերի ստորագրմամբ ու կնքմամբ:

3.2 Յուրաքանչյուր ամիս կատարման ենթակա Աշխատանքների կամ դրանց որևէ մասի ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուն կազմում, ստորագրում,

կնքում և Նվիրատուին է ներկայացնում հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը:

3.3 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և Աշխատանքների կատարման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Նվիրառուին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

3.4 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և (կամ) Աշխատանքների կատարման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուին է ներկայացնում Աշխատանքները կամ դրանց որևէ մասը չընդունելու պատճառաբանված գրավոր մերժում, մատնանշելով անհամապատասխանությունները և սահմանելով Աշխատանքների կամ դրանց որևէ մասի վերստին կատարման ողջամիտ ժամկետ:

3.5 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը համարվում է Նվիրատուի կողմից ընդունված, եթե դրա հանձնման-ընդունման արձանագրությունը Նվիրառուից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրտուն չի կատարում սույն պայմանագրի 3.3-րդ կամ 3.4-րդ կետերով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

3.6 Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի հետ կապված վերջնահաշվարկները Կողմերի միջև կատարվում են յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով (համաձայն հավելված 5՝ «Նախահաշվի»):

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն պայմանագրով և Միջոցառումով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Նվիրառուն պարտավորվում է Նվիրատուին փոխհատուցել Աշխատանքների չկատարված մասի չափով և վճարել տուգանք՝ Աշխատանքների չկատարված մասի համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Նվիրառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Նվիրառուին վճարվելիք գումարներում:

5. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

5.1. Նվիրատուն Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

5.2. Մոնիթորինգն իրականացվում է Նվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

5.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Նվիրառուին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

5.4. Նվիրատուն ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

5.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Նվիրառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ պայմանագրի դրույթները տարածվում են մինչև դրա կնքման պահը՝ 2019 թվականի հունվարի 01-ից ծագած Կողմերի փաստացի իրավահարաբերությունների վրա:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է այնպիսի արտակարգ ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նման իրավիճակներ են հանդիսանում մասնավորապես՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, զանգվածային հասարակական անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության համակարգերի աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունն անընդմեջ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Միջոցառումը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված վեճերը և սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է 6 թերթից և __ թերթ հավելվածներից, կնքվում է երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրատու՝ ՀՀ ՏՀՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե, ՀՎՀՀ 02528489, հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ 900011145050:

Նվիրառու՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝ N 222.210.00408, գրանցման ամսաթիվը 08.10.2004 թ., վկայական N 03Ա085321, տրված 23.09.2009 թ., ՀՎՀՀ՝ 02562123 իրավաբանական և գործունեության հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 10, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ 900018002981:

Նվիրատու՝

_____ ***Ա. Օբոյան***

Կ. Տ.

Նվիրառու՝

_____ ***Է. Օհանյան***

Կ. Տ.

Հավելված N 1

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայությունների դրամաշնորհի»

24 հունվար թ. N 77297-ա կայմանագրի - 2019

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նվիրառուն իրականացնելու է.

1. Կառավարական թիվ 2 շենքի շահագործման և այդ շենքում տեղակայված՝ ՀՀ արտաքին գործերի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ արդարադատության, ՀՀ սփյուռքի և ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովում, հետևյալ եղանակներով.

1) կապի ու ինտերնետի ներքին ցանցերի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,
2) անցագրային ավտոմատացված և տեսահսկման համակարգերի շահագործում,
3) հակահրդեհային (ներառյալ՝ ազդանշանային) համակարգի շահագործում,
4) ջեռուցման-հովացման համակարգի շահագործում,
5) օդափոխության և ծխահեռացման համակարգերի շահագործում,
6) ջրամատակարարման ու կոյուղու ներքին ցանցերի շահագործում,
7) էլեկտրամատակարարման ներքին ցանցի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,
8) վթարային էլեկտրամատակարարման համակարգի շահագործում
9) վերելակների շահագործում և դրանց տարեկան փորձաքննության իրականացում,
10) համալիրի (ներառյալ դրան ամրացված հարակից /արտաքին/ տարածքի) մաքրության և աղբահանություն ապահովում,
11) դեռատիզացիայի կատարում,
12) ընդհանուր օգտագործման տարածքների և համալիրի արտաքին լուսավորության ապահովում

անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների հետ ծառայություններ մատուցելու պայմանագրեր կնքելու միջոցով:

(Հավելված N 2՝ «Աշխատանքների կատարման ժամանակացույցում» նշված շենքի ընդհանուր մակերեսը հաշվարկված է հիմք ընդունելով սեփականության իրավունքի պետական գրանցման N 09062016-01-0169 ու N 04052018-01-0297 վկայականների և Երևան քաղաքի Վազգեն Սարգսյանի 3 հասցեի շենքի չափագրության մեջ նշված մակերեսները)

2. Կառավարական թիվ 3 շենքի շահագործման և այդ շենքում տեղակայված՝ ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների, ինչպես նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի բնականոն գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովում, հետևյալ եղանակներով.

1) կապի ու ինտերնետի ներքին ցանցերի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,
2) անցագրային ավտոմատացված և տեսահսկման համակարգերի շահագործում,
3) հակահրդեհային (ներառյալ՝ ազդանշանային) համակարգի շահագործում,
4) ջրամատակարարման ու կոյուղու ներքին ցանցերի շահագործում,
5) էլեկտրամատակարարման ներքին ցանցի (բացառությամբ սույն նկարագրի 1-ին կետում թվարկած նախարարությունների կողմից միանձնյա տիրապետվող սարքերի ու սարքավորումների) շահագործում,
6) շենքի (ներառյալ դրան ամրացված հարակից /արտաքին/ տարածքի) մաքրության և աղբահանություն ապահովում,
7) դեռատիզացիայի կատարում,
8) ընդհանուր օգտագործման տարածքների և համալիրի արտաքին լուսավորության ապահովում
9) թվով 5 վերելակների շահագործում (ներառյալ՝ դրանց մասնագիտական տեխնիկական սպասարկումն ու տարեկան փորձաքննության իրականացումը),
10) ջեռուցման համակարգի շահագործում (ներառյալ՝ կաթսայատների տարեկան փորձաքննության իրականացումը),

անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների հետ ծառայություններ մատուցելու պայմանագրեր կնքելու միջոցով:

(Հավելված N 2՝ «Աշխատանքների կատարման ժամանակացույցում» շենքի ընդհանուր մակերեսը նշված է ՀՀ կառավարության 31.03.2016 թ. N 340-Ն որոշման 1-ին կետին համապատասխան)

3. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքի ու մտավոր սեփականության օբյեկտների և պետական ոչ առևտրային կազմակերպություններին ու պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին պատկանող անշարժ գույքի հաշվառում «Պետական գույքի հաշվառման և գրանցամատյան վարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 282 որոշումը մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության, պետական կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող գույքի՝ Նվիրատուի հանձնարարությամբ գույքագրում և ուսումնասիրությունների կատարում «Հաշվապահական հաշվառման մասին» ու «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահաման հաշվառման մասին» ՀՀ օրենքների և «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թ. հունիսի 2-ի N 102 և «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամանակահատվածը սահմանելու մասին» 2016 թվականի հունվարի 8-ի N 2 հրամանների պահանջներին համապատասխան:

5. Հայաստանի Հանրապետության, պետական կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող գույքի, ինչպես նաև այդ գույքի վարձակալության արժեքների՝ Նվիրատուի հանձնարարությամբ գնահատում «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ու «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքների և «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թ. հունիսի 8-ի N 955-Ն ու «Մասնավորեցվող և օտարվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թ. մարտի 27-ի N 209 որոշումների պահանջներին համապատասխան:

Նվիրատու՝	***Նվիրառու՝***
_____ ***Ա. Օբոսյան***	_____ ***Է. Օհանյան***
Կ. S.	Կ. S.

Հավելված N 2
«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայությունների դրամաշնորհի» 24 հունվարի թ. N ՄԳՎ-01-2019 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքների և դրանց գնահատման քանակական ցուցանիշների անվանումները	*Քանակը և չափման միավորը*			
	3 ամիս	*6 ամիս*	*9 ամիս*	*12 ամիս*
Պետական գույքի հաշվառման անցկացում, հատ	1000	2700	5000	7000
Պետական գույքի գույքագրման և ուսումնասիրությունների անցկացում,հատ	25	60	100	140
Պետական գույքի գնահատման անցկացում,հատ	5	10	15	20
Կառավարական թիվ 2 շենքի սպասարկվող տարածք, ք.մ	33120,4	33120,4	33120,4	33120,4
Կառավարական թիվ 3 շենքի սպասարկվող տարածք, ք.մ	29327.8	29327.8	29327.8	29327.8

Կ.Տ. **Նվիրատու՝** ____________ **Ա. Օբոսյան**

Կ.Տ. **Նվիրառու՝** ____________ **Է. Օհանյան**

Ձև

Հավելված N 3
«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայությունների դրամաշնորհի» 24 հուլիսի թ. N ...-01-2019 պայմանագրի

Նվիրատու՝

ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե, ՀՎՀՀ 02528489, հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011145050

Նվիրառու՝

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ,
ՀՎՀՀ 02562123, հասցե՝ ք. Երևան, Զաքիյան 10,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ 900018002981::

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ______
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
«____»____________ 2019 թ.

Պայմանագրի անվանումը՝ «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայությունների դրամաշնորհի»:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ____ __________ 2019 թ.
Պայմանագրի համարը՝ ____________
Նվիրատուն, ի դեմս պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա. Օբոսյանի և Նվիրառուն, ի դեմս «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի պարտականությունները ժամանակավորապես կատարող՝ Է. Օհանյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___»__________ 2019 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Աշխատանքները համապատասխանում են պայմանագրով սահմանված նկարագրին և Աշխատանքների կատարման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Նվիրառուն «___»________ 2019 թ-ից մինչև «___»________ 2019 թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ Աշխատանքները.

N	Աշխատանքի համառոտ նկարագիրը	Աշխատանքի քանակական ցուցանիշները	Աշխատանքի կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ. դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
	Ընդամենը	....	....		

Նվիրատու՝ ____________ **Ա. Օբոսյան**

Կ. Տ.

Նվիրառու՝ ____________ **Է. Օհանյան**

Կ. Տ.

Հավելված N 4
«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայությունների դրամաշնորհի» 24 հունիսի թ. N...-01-2019 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի անվանումը	Վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)			
	3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	52.393,2	130.826,1	209.259,0	313.731,6

Կ. Տ. **Նվիրատու՝** ____________ **Ա. Օբոյան**

Կ. Տ. **Նվիրառու՝** ____________ **Է. Օհանյան**

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Նախահաշիվը 313731.6 (Երեք հարյուր տասներեք միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ՝

Ն. Բաբայան

(ստորագրություն)

«24» «հունվար» 2019թ.

Հավելված N 5

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայությունների դրամաշնորհի» 24.01 2019 թ.

N ՊՊԳԳ-01-2019 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Կազմակերպության կողմից բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող ծախսերի

(ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների)

01 հունվարի 2019 թ-- 25 դեկտեմբերի 2019 թ. ընկած ժամանակահատվածի համար

1.Կազմակերպության անվանումը « Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ

2.Փոստային հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 10

3.Պետական կառավարման մարմնի անվանումը Պետական գույքի կառավարման կոմիտե

4. Հիմնարկը սպասարկող տեղական գանձապետական բաժնի (ՏԳԲ) անվանումը -Երևան թիվ 1 գանձապետական բաժանմունք

հաշվառման համարը 900018002981

5. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01

6.Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների, գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայություններ

7.Ծրագրի կոդը **06**

8.Չափի միավորը՝ հազ. ՀՀ դրամ

Տողի համարը	Բյուջետային միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի անվանումները ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների	Տնտեսագիտական ծածկագիր	Սույն նախահաշվով հաստատվող ցուցանիշները	այդ թվում ըստ եռամսյակների (եռամսյակի ամիսների աճողական)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	9 ամիս	Տարի
Ա	Բ		1	2	3	4	5
2000000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	**0067**	**313,731.6**	**52,393.2**	**130,826.1**	**209,259.0**	**313,731.6**
այդ թվում ԱԱՀ			52,288.6	8,732.2	21,804.3	34,876.5	52,288.6
1000000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**		**313,731.6**	**52,393.2**	**130,826.1**	**209,259.0**	**313,731.6**
	այդ թվում						
1100000	**ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ**	**411100**	**236,350.4**	**41,035.3**	**97,928.4**	**157,678.5**	**236,350.4**
	այդ թվում						
1110000	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		**236,350.4**	**41,035.3**	**97,928.4**	**157,678.5**	**236,350.4**

1200000	**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ**	**X**	**20,948.6**	**1,663.1**	**10,417.9**	**13,848.5**	**20,948.6**
	այդ թվում						
1210000	Էներգետիկ ծառայություններ	421200	734.4	190.0	365.0	403.5	734.4
1220000	Կոմունալ ծառայություններ	421300	1,044.9	174.2	429.3	696.9	1,044.9
	այդ թվում						
1221000	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ		45.0	7.5	12.5	30.0	45.0
1222000	Շենքերի պահպանման ծառայություններ /դեռատիզացիա/		999.9	166.7	416.8	666.9	999.9
1230000	Կապի ծառայություններ	421400	460.0	95.0	243.4	340.0	460.0
1240000	Համակարգչային ծառայություններ	423200	50.0		50.0	50.0	50.0
1250000	Տեղեկատվական ծառայություններ	423400	40.0	10.0	18.2	30.0	40.0
1260000	Մասնագիտական ծառայություններ	424100	1,576.8	0.0	0.0	0.0	1,576.8
	այդ թվում						
1261000	Վերելակների ,կաթսայատների տեխնիկական անվտանգության փորձաքննություն		676.8				676.8
1262000	Մաքրման ծառայություն մասնագիտացված կազմակերպության կողմից		900.0				900.0
1270000	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում, պահպանում	425100	720.0	120.0	320.0	516.0	720.0
1280000	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում, պահպանում	425200	6,441.0	876.3	2,749.0	4,660.0	6,441.0
1290000	Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	852.0		550.0	852.0	852.0
1210000	Տրանսպորտային նյութեր	426400	457.0	0.0	242.0	242.0	457.0
	այդ թվում						
1211000	Դիզվառելիք		215.0				215.0
1212000	Բենզին		242.0		242.0	242.0	242.0
1220000	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	8,348.5	197.6	5,227.0	5,834.1	8,348.5
1230000	Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	224.0		224.0	224.0	224.0
1300000	**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՐԿԵՐ /ԱԱՀ/**	**482200**	**49,738.4**	**8,544.8**	**19,729.6**	**33,235.7**	**49,738.4**

1400000	ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ /ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ/	482300	5,544.2	930.0	2,310.2	3,696.3	5,544.2
1500000	ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐ /ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ/	422100	1,000.0	200.0	400.0	700.0	1,000.0
16000000	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	486100	150.0	20.0	40.0	100.0	150.0

Գլխավոր տնօրենի պարտականությունները ժամանակավորապես կատարող՝

(ստորագրություն) Է.Օհանյան

Ֆինանսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն) Գ.Ղոռշյան